Առճակատում՝ ինչո՞վ Բանակցութիւն՝ ինչո՞ւ

Բոլոր երաշխիքները կան, որ Գերագոյն խորհրդի երկուշաբթի օրուայ նիստը լինի փոթորկալի: Խորհրդարանի ճախագահը խոստացել է ներկայացնել Արցախի հարցի լուծման նոր ճախագիծ, մինչ պատգամաւորների մի խումբ արդէն վաւերացրել է մի ուրիշը, որը պահանջում է հիմնովին փոխել պայքարի ուղին, անցնել բաց եւ «միջազգայնօրէն» ճանաչուած առճակատման քաղաքականութեան:

Մի կողմ թողնելով հարցի տեսական հակասութիւնները, ներկայացուած փաստաթղթի գլխաւոր անպատեհութիւնը նրա անգործնականն լինելն է: Միջազգային պրակտիկան, հակառակ ՄԱԿ-ի եւ այլ ատեանների համապատասխան օրէնքներին, չունի որեւէ օրինակ, որն ապացուցէր, թէ հնարաւոր է միջազգային օրինականութեան իրական կարգավիճակ տալ ազգային-ազատագրական որեւէ պայքարի՝ առանց գերիշխող պետութիւնների շահակից համաձայնութեան: Ամենապերճախօս փաստը պաղեստինցի ժողովրդի երկարամեայ պայքարն է, որին այսպէս թէ այնպէս թիկունք են կանգնել արաբական 21 պետութիւն, նաւթային հզօր մի արդիւնաբերութիւն, ասիական ու աֆրիկեան բազմաթիւ երկրներ, որոնք մեծամասնութիւն էին կազմում ՄԱԿ-ի ընդ. ժողովում, բայց կոպեկ չարժէին ու չարժեն, օրինակ, ԱՄՆ-ի մի վետոյի դիմաց:

ՄԱԿ-ը, ի գիտութիւն մեր պատգամաւորներից ոմանց, որոնք շատ են սիրում այն վկայակոչել, իրականում բարոյական բարձրագոյն ամբիոն է, որտեղից կարելի է ընդամենը հասարակական կարծիք ստեղծել, այն էլ՝ եթէ թոյլ տան զանգուածային լրատուութեան մոնոպոլիստները...

Հետեւաբար, այդ ճախագիծը, հակառակ ազնիւ ընդվզումի արտայայտութիւն լինելու, գործնական չէ, յուսահատական է, եւ կարող է Հայաստանի Հանրապետութեանն ու Արցախին տանել դէպի տոտալ պատերազմ, որին պատրաստ չենք եւ որը բուն նպատակն է Մոսկուա-Բաքու առանցքի, մեր նորահաստատ իշխանութիւնը տապալելու յայտնի ծառայութեամբ:

Այսուհանդերձ, մեր ժողովրդի սրբազան իրաւունքն է ինքնապաշտպանութիւնը, սեփական կեանքն ու երկիրը զէնքով պաշտպանելու իրաւունքը: Մեզ ոչ մի ՄԱԿ պէտք չէ այն ուենենալու համար, ոչ իսկ սեփական խորհրդարանի որոշումը: Այն սկսում եւ վերջանում է սեփական անձից եւ անձի մէջ: Եւ բոլոր նրանք, որոնք այժմ պահանջում են ուժի դիրքերից խօսել, լուրջի կառնեն միայն այն դէպքում, երբ իրենց ուժն էլ կը միաւորեն հաւաքական ուժի հետ եւ մէջ: Խորհրդարանից ակնկալուածը վերակազմակերպելն է այդ ուժը, նրան հաւասար պատասխանատուութեամբ հաւաքական դիմադրութիւն տալը:

Միւս կողմից, յայտնի է, թէ ցարդ իրենց չի արդարացրել նաեւ երկխօսութեան, բանակցութիւնների, փոխզիջման քաղաքականութիւնը: Առայժմ մենախօսութիւն է մեր արածը, բանակցող կողմ ու ցանկութիւն չկայ մեր դիմաց եւ միայն զիջում է պահանջում մեզնից: Եւ քաղաքական սառը տրամաբանութեան տեսակէտից դա բնական է: Քանզի չենք օգտուել եւ չենք օգտուում ներկայացուած առիթներից, մեր բոլոր հնարաւորութիւններից, անմիաբանութեամբ կամ ամբոխավարութեամբ ենք դիմաւորել ու դիմաւորում բոլոր պատեհութիւնները, չենք բոլորուել ու շարունակում ենք չբոլորուել մեր իսկ ստեղծած իշխանութեան շուրջ: Եւ այժմ սխալների հատուցման ժամն է, որին պէտք է դիմանալ ու դիմադրել ամէն կերպ, ամուր պրկուած զսպանակի նման:

Այո՛, դիմանալ ու դիմադրել: Այս պէտք է լինի մեր կեցուածքը առայժմ: Եւ ոչ մի նոր ճախագիծ, առաջադրուած կամ առաջադրուելիք, չի կարող աւելին տալ մեզ ներկայ պահին: Մինչեւ որ հասնի նոր պատեհութեան առիթը: Պայմանաւ, որ մինչ այդ «նախագծերի պատերազմ» չսկսուի հայոց խորհրդարանում: